


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻՍԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՍԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կը հրահարակոյի նարաք օրերը: Ծա-
նոցման տոյր 10 Սանդիս: Երկու քիւ ա-
ռալ հրահարակուած քերքը 40 Սանդիս:
Զհրահարակուած գրուքիւնը եւ յսրուիր:

Հասցե
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

Մեր Պատ. գործակալներէն
կը խնդրենք որ բաժանորդագրները
գանձելով մեզ ղրկեն: Վեցամսեայ շրջա-
նը լրանալու մօտ է:

Օսմ. կառավարութիւնը որոշեր է
անցագիր չի տալ Պուլկարիա երթալ ու-
ղող իր այն հպատակներուն, որոնք կա-
ռավարութեան ունեցած պարտքերնուն
համար չեն կրնար կալուածատէր երաշ-
խաւորներ ցոյց տալու:

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի հո-
գարարձութիւնը կազմուեր է հետեւալ
անձերէ.

Կիւլպէկեան Պատրիկ
Կիւմիւշկէրտան Գրիգոր
Սթամպուլուեան Յակոբ
Համբարձումեան Գառնիկ
Մանուկեան Տիգրան
Էվրէնեան Գրիգոր
Ալեանապեան Գրիգոր

Ռուս կառավարութիւնը Կաւկասիոյ
մէջ օտարականներու կալուած գնելը
այլեւս արգիլեց:

ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԶԻՆ

Արաբկիրի և Ակնայ կողմերը Յու-
նիս 12ին բաւական ձիւն եկեր ու խիստ
ցուրտ մը ըրեր է, այնպէս որ կանա-
չեղեններու ու պտղատու ծառերուն մեծ
քնաս հասուցեր է: Նմանապէս Վանէն
երկու ժամ հեռաւորութեամբ Շուշանի
և Վարագ լեռները յունիս 12ին ձիւնով
ծածկուեր են:

Այս տարի Պէրպէրեան գիշերօթիկ
վարժարանը ազգին կուտայ 8 շրջանա-
ւարաններ, որոնց 7ը Պոլսեցի և 1ը Պար-
տիզակցի են: Յիշեալ վարժարանի հաս-
տատութենէն ի վեր 128 շրջանաւարտ-
ներ վկայական առած են:

Շնորհակալութեամբ ստացանք Տի-
ար Ս. Սապահ—Գիւլեանի «Եւրոպաի
քաղաքական գրութիւնը Պէրլինի դաշ-
նագրութենէն յետոյ» անուն երկասի-
րութիւնը: Ռուսճուգի Ազգ. վարժարա-

նաց տնօրէնին սոյն երկը, որ Արեւելեան խնդրոյն վրայ Եւրոպեան քաղաքակա- նութիւնը իմաստասիրած և դէպքերն դասաւորած է խորին հմտութեամբ, ջերմապէս կը յանձնարարենք մեր ըն- թերցողաց, հասկնալու համար թէ ինչ է Արեւելեան խնդիր ըսուածն և թէ Եւ- րոպեան տէրութիւնք ինչ շահ եւ կա- պակցութիւն ունին իրարու հանդէպ սոյն խնդրոյն առթիւ:

Կ. Պոլսոյ Կրօն. ժողովը միաձայնու- թեամբ որոշեր է որ այսուհետեւ Պսակի արարողութիւնը ըստ օրինի անպատճառ Եկեղեցիին մէջ կատարուի:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մանչէսթրի ազգայնոց հովիւ Արթ. Տ. Թէոդորոս քահանայ Տ. Իսահակեանի ջանիւք հաւաքուած ու Վառնա շրջուած երկու սեռի յատուկ մէկ հակ և մէկ սնտուկ հանդերձեցնենք կանանց վե- րաբերեալները Ազն. Տիկին Պ. Փափաղ- եանի ձեռօք, իսկ արանց վերաբերեալ- ները Տիար Կ. Յովասափեանի ձեռօք այս անգամ կարօտ երկսեռ գաղթականց բաժնուած են:

Առաջին օրէն, Արթ. Տ. Հօր Պուլ- կարիոյ գաղթականաց մասին ունեցած հոգածութիւնն ու խնամքը ազգովին շշ- նորհակալութեան արժանի է:

Կը լսենք թէ տեղւոյս Հոգաբարձու- թիւնը ազգային երկսեռ վարժարանաց ուսուցչական մարմինը խմբովին հրա- ժարեցուցած է:

Անցեալ կիրակի օրը Վառնաի Ս. Եկեղեցիին մէջ տեղի ունեցած ազգ. երկսեռ վարժարանաց վիճակացոյցերու բաշխման և Պ. Տնօրէնի կողմէ եղած

ատենախօսութեան մասին տեղական հայ թերթերը արդէն պէտք եղածը գրած ըլլալով, աւելորդ կը համարինք կրկնել զայն, միայն մեր ստացած տեղեկու- թեանց վրայ կը յայտարարենք թէ Պ. Տնօրէնի համակիրներուն վրայ անգամ տխուր տպաւորութիւն մը թողած է այն կծու ակնարկները, թուքերը ու մու- րերը, որոնք չէին կրնար ուղղուիլ պաշ- տօնական մարմիններու դէմ:

Մասնաւոր նամակներէ կը տեղե- կանանք թէ Ռուսնոգի երկսեռ վար- ժարանաց հրապարակային քննութիւնք խիստ յաջողութեամբ անցեր են. անց- եալ կիրակի ալ պարգեւաբաշխութեան հանգէսը կատարուեր է վարժարանին սրահին մէջ, ի ներկայութեան երկսեռ խումբն բաղմութեան:

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐ

Հոն՝ ուր անհաւատարմութիւնը կը սկսի, բարեկամութիւնը մնաք բարով կըսէ:

— Սուր յիշողութիւնը աղքատ ու սանողին գրատունն է:

— Սուտն ու ճշմարտը գրան մը առջև կեցան, դուռը բացուելուն պէս ասոնցմէ ո՞րը առաջ ներս մտաւ. — Սուտը:


— Ամուսնացողը ամուրիէն, աշխա- տաւորը ծոյլէն աւելի երկարակեաց է:

— Աղքատութիւնը աշխատող մար- դուն գռնէն ներս կը նայի, բայց հոն մտնելու չի համարձակիր:

— Մարդկանց ամենէն դժբախտը ծոյլն է:

— Բարեկամաբար եղած խօսակ- ցութեանց ձայները շատ անուշ կը հըն- չեն:

Թարգմ.



ՏՐԵՂ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա.

Յիսուսն և Հինգ տարեկան, ճերմակ մազերով բծնոց մը, որուն սիրտը տակաւին կը տրոփէ տարիներու բնական տակ, որ գեղանի աղբատին արցունքը սրբելու համար գաղտնի տեղ մը կանչելով ողորմութիւն կուտայ միշտ սա ցած պայմանով որ երբեմն տեսնուինքներ սարքելու հաճութիւնը տայ, որ իր հագածը անոր էրկանը կը հագցունէ, մեկտեղ կը նստի, անոր բաժինին ինկած տան վարձքը կը վճարէ, հետը պտտել ու շուարձանալ կերթայ, ժամերով կը խօսակցի, ու մինչդեռ կնոջ ամուսինը միամտաբար հանդարտ սրտով նստած տեղը կը մտափէ, անդին մեր խրոփածը անոր պատիւը կը սակարկէ...

Վերջնապէս կ'ազգարարուի այդ ծեր պարոնին, որ այլ եւս հրաժարի աղբատի մը թշուառութենէն օգուտ բաղելու կեցողութեամբ, ապա թէ ոչ...

Բոժ. — Պիտի տեսնուի՞նք:

Բ.

Գիշերուան մը ժամը 11ն է: *** քաղաքին հայոց եկեղեցիին դուռը ափ կառնեն. ժամակոչ, քահանայ և լուսարար ընդոստ կարծնան, ու դուռը բանալով կը տեսնեն որ մկրտելու համար նորածին մը բերելու են, «հիւանդ է, պիտի մեռնի», ըսելով:

Ժամկոչը երախային կը նայի որ մշիկ մշիկ կը քնանար առանց աղմուկի, և զարմանքով կը հարցնէ թէ, «Մեր գիտցածը, հիւանդ չօժուխը կուլայ, ինչո՞ւ ասիկա ձայն չի հաներ»:

— Ժամկոչ աղբար, կը պատասխանէ կտրող կապող դայեակը, տալըն սահաթին ըրած լեզու և կար. դուք հիմա մկրտելնիդ նաշեցէք, անոր ձայնը վաղը առտու պիտի իմանաք:

Կըսեն թէ դայեակին մարգարէութիւնը կատարուեր է. հետեւեալ առաւօտ նորածինը լեզու ելած, կը պոռայ եղեր թէ «Ո՛վ է իմ հայրիկս». որովհետեւ նայեր է որ տարիէ մը ի վեր բացակայ գտնուող հօրը ամենեւին չի նմանիր, թէպէտեւ անոր անու-

նովը արձանագրուած է եղեր... ընտանեկան փառքի կին մէջ:

Բոժ. — Ղատեա՛ տէր գայնոսիկ ոյք զատեն զիս:


Վրիպակ. — Մեր անցեալ թուով հըրատարակուած «Ծանօթ դէմքեր» յօդուածին մէջ Պ. Մ. Կի համար 40—42 տարեկան բնուած էր, այժմ Շուշան դայեակին վըկայութեանը վրայ կը յայտարարենք թէ Պ. Մ. Կ. 38 տարեկան է եղեր:

Ի ԿԱՊՐՕՎԱ

Սօցոսի առաքելոյն, առաւ—փախուի թղթոյն է ընթերցուածս.

Երեւակայութեամբ՝ ազարակատէր, անբաւ հարստութիւն դիզող... ծակ գրպանին մէջ, ի Պուգրէշ երազական հոյակապ կալուածներ ունեցող, 2—3 ամիսը անգամ մը աշխարհացոյց քարտէսին վրայ Եւրոպան պըտըտող ու իր սեպհական հաւնոցին մէջ անհամար հաւեր եւ վառեակներ ունեցող մէջիգօֆ պարոն մը, վերջերս ո՛վ գիտէ ո՞ւր տեղէն լուսանկարի գործիքներ ձեռք ձգած, տունէ տուն շրջելով կառաջարկէ եղեր օրիորդներուն լուսանկարնին քաշել... անկուտիաբար: Այսպէս վերջերս աղաչեր է օրիորդի մը իրեն թոյլատրելու, որպէս զի անոր լուսանկարը քաշէ պատուհանին առջև նստած գիրքի մէջ. խորամանկ օրիորդը իր եղբօրը կիմացնէ այս բանը և անոր հրամանաւ՝ կը խոստանայ այն ինչ ժամուն պատրաստ գըտնուիլ: Մեր լուսանկարչին ուրախութենէն ուրբ գետնէն կը կտրի և որոշեալ ժամուն օրիորդին բնակած տանը դիմացի պարտէզին մէջ մեքենան կը տեղաւորէ. օրիորդը պատուհանին առջև կ'երեւայ. պարոնը գործի կը սկսի, բայց ապակիին կախարիչը բանալու վայրկենին՝ օրիորդին կը յաջորդէ եղբօրը... կռնակը, որուն պատկերը կը քաշուի:

Կըսուի թէ Պ. լուսանկարիչը բերանաբաց հիացումով կը դիտէ եղեր տակաւին այդ կռնակը:



ԾԱՆՈԹ ԴԵՍՔԵՐ



Ե.

ՏԻՆՃԷ

Միջհասակ, նիհար, ջղուտ, յոգնած գէմբով ու սև մօրուքով մարդ մը, աչքերը ակնոցին տակ պահուած, գլխուն վրայ դեռ ճերմակ մազ մը չի տեսնուիր, 40 էն 42 տարեկան: Ձեռքը ունի կէռ գաւազան մը, զոր քարերուն զարնելով կամ քսքսելով հետը մեկտեղ կը բշէ. քալած ատենը ձեռքերը տափատին գրպանը դրած է. գլուխը մերթ կախ, մերթ բարձր ու մերթ ուսերուն մէջտեղը կտրուած, մտածելով, հաշուելով կը քալէ աչքերը գետինը, կարծես թէ բան մը կը փնտռէ ու չի գտներ:

Հագուստը անխնամ, բայց մաքուր. դէմքին, մօրուքին ու գլխուն մազերուն պէս սևի սև գլխարկ մը կրած է, հին օրերու բարեկամ մը, որ տարիներէ 'ի վեր ծառայելէ ձանձրացած՝ հանգստեան կը բողջայ, բայց տէրը անկէ բաժնուելու տրամադիր չեղեր:

Բողջական միսիօնարի մը երևոյթն ունի. խօսելու ատենը աչուրները կէս գոց կէս բաց են. կարծես թէ Աւետարանէն կամ Ս. գիրքէն գլուխ մը, համար մը ցոյց պիտի տայ որ կարգաս:

Երեսէն՝ հանդարտ ու թունդ բնաւորութեան տէր մէկը կը կարծուի, բայց անոր աչքերուն խորը երբ թափանցես, շուտով կը կարգաս յամառ ու հաստատակամ մէկը ըլլալը. հոն կը տեսնես յստակօրէն թաքուն վիշտ մը ունենալը, որ մոռնալ կուզէ, սակայն ամեն վայրկեան երեւակայութեանը առջև ուրուականի մը պէս տնկուած կեցած է:

Նաւ դրող մըն է. իր յատուկ ոճը, գրականութիւնը ունի, կարճ, ամփոփ ու խորհրդաւոր, և շատ անգամ ջախջախիչ են:

Ճարտար խօսող մըն է, ժամերով կրնաս մտիկ ընել, բայց շատ օր չի խօսիր, բէն կը պահէ:

Խնդալը բնաւ չի տեսնուիր. միշտ խոհուն, կուգայ վայրկեան մը որ ծիծաղը միջև շրթունքը կը հասնի, բայց Պ. Տիւնճէ աչքերը գոցելով կարգիլէ անոր պոռթկումը:

Մայրենի լեզուէն զատ գիտէ նաև մէկ երկու օտար լեզուներ: Վազող, վաղվատող, մեծ երազներ տեսնող մարդ մը, առեւտրական ահագին գործերու մէջ մտած ելած, բայց ամեն անգամ վնասով դուրս ելած է գործին մէջէն, կերակայ թէ հայրը անիծելով ըսած է, « ոսկի բոնես, հող կտրի, » իրաւ աւսանկ եղած է. դիմած աղբիւրին ջուրը կը կտրի: Պ. Տիւնճէ վտանգաւոր մարդ է, կատակի չի գար, արժանապատուութիւնը վիրաւորողին, անունը սեցնողին համար գութ չունի. մինչև իսկ զաւակը ըլլայ՝ չի ներիր. ամենասոսկալի բնիական դէպքեր մ'է. տարիներով կը պահէ ոխը, վրէժը լուծելու համար կը սպասէ յարմար ատենին. վայ հետը գործ ունեցողին, զայն անմիջապէս արդարութեան ձանկին կը յանձնէ: Ամեն բանի փոխարինութիւն կը պահանջէ, քեզի տուած բարեւին անգամ. հատուցումներուն վերջը չի բերեր, պատուոյ ու նիւթական հատուցում, դրամական հատուցում, ժամանակի հատուցում և 'ի կարգին. կեանքին մէջ միշտ պահանջէի կողմնակիցը եղած է:

Իսկ եթէ յանցաւորը ինքն է. այն ատեն համակերպող, հլու, գլուխն ու գլխարկը մէկ կողմ ծռած, բարեւ բռնած՝ ինքզինքը հայ ժողովուրդին տրամադրութեան տակ գնելով գաղափարներու ուրիշ շարքի վրէժ, կը հրամայէ որ լինչի օրէնքով սպաննեն, մէջտեղէն վերցնեն իր անձը. առանց սպասելու արդարութեան վճռին:

Պ. Տիւնճէ ամեն ատեն կը ներկայացնէ դէմքը այն մարդուն՝ որ ըսել կուզէ « բուկին խերդ պիտի անիծեմ »:

X

ՍԵՂՄԻՐԱՆԸ

Ասողջաբանները և բժիշկները ուզած-նուն չափ թող հակառակին . սեղմիրանը (for-սեն) պիտի թափաւորէ կիներու աշխարհին մէջ, միայն Բօրթուկալի մէջ է որ կուրծքի այդ բանտին դէմ — խեղճ բանտարկեալներ — պայքար մը կը մղուի և հաւանական է որ քիչ ատենէն Բօրթուկալի կիները դադ-րին զայն գործածելէ :

Օրինակը վերէն կուգայ . քօրսէի ամե-նէն մեծ թշնամին Բօրթուկալի թագուհին է :

Շնորհափայլ վեհապետուհին, որ գի-տութեանց սիրահար մըն է, շատ հետաքրք-րուած է Ճառագայթներու գիւտին և ա-նով կղբաղի ժամանակէ մը ի վեր . հետե-ւաբար իր փորձերը կընէ շուրջը գտնուած պալատական կիներուն վրայ :

Իր մասնաւոր դադմունքը ըրած է Ճառագայթներով լուսանկարել անոնց մար-մնոյն գլխաւոր մասերը :

Իր բազմաթիւ փորձերուն մէջ միշտ դիտուած է որ այդ կանացի կռքերը բա-ցարձակ տձե պատկերներ կը ներկայացնէին, այնպէս որ Ճառագայթներուն տակ իյ-նող կիները կամչնային այդպիսի ողորմելի ի-րաններ ունենալուն :

Այս աւերումը քօրսէին գործն էր, ուս-տի այդ պալատական կիները ամենքն միասին ուխտեցին մէկ կողմ դնել սեղմիրանին գոր-ծածութիւնը :

Եւ հաւատացէք որ այդպէսով բան մը չի կորսնցուցին իրենց գեղեցիկութենէն և կամ շնորհէն :

Այդ պալէնայէ մեքենային գործածու-թիւնը որ իր մատուցած շատ չնչին ծառա-յութեան փոխարէն՝ այնքան աղետաբեր դեր մը կը խաղայ կիներու կեանքին մէջ, կառա-վարական հրամանով արգիլուած է քալիֆօր-նիոյ պետական դպրոցներու աշակերտուհի-ներուն :

Սեղմիրանը այն է կիներու համար ինչ որ է ծխախոտը էրիկ մարդոց : Վայրկենական

հաճոյքի մը փոխարէն՝ կեանքը կարճեցնելէ զատ ուրիշ նպատակ չունին երկուքն ալ :

Սակայն ծխախոտը սա առաւելութիւնը ունի որ զայն գործածողը իր անձնական հա-ճոյքին համար այդ թոյնը կը ծխէ, մինչ սեղմիրան հագնող կինը չի կրնար միեւնոյն բանն ըսել :

Թ.

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ԵՕԳԱՐՏԱՆ ԶՕՐՊԱ
ԱՇԱՂՏԱՆ ՏՕՆՏՈՒՐՄԱ

Կէչէնլէրտէ Անատօլիւլը իբի հայ թիւճարլար Ալէմանիայա պիր եօլճաւուգ իտէրլէր : Պուսլար՝ Էվրօբա լիսանլա-րընտան հիչ պիրիսինէ աշնա օլմատըգ-լարը իչիւն պիր թէրճիման վասըթա-սըյլա ֆապրիգալարը վէ տիւքեանլարը գիյարէթ իտէրլէր իսէ տէ, ագչամըսը տախի եէնիտէն թէրճիման մասարիֆի վէրմէմէք իչիւն, եալընըգճա գալգըպ պիր լօբանթայա կիրէրլէր : Լօգանթա-նըն կարսօնու հէման եէմէքլէրին լիս-թասընը (ալէման լիսանըյլա) կէթիրիպ պու իբի զաթա վէրիր . մէրգուլար՝ թաաճիւպլէ պիրի պիրլէրինէ պագար-լար :

— Շիմտի նէ՞ եաբաճաղըզ, էրթին ալա .

— Եաբաճաղըմըզ շու քի՞ զարնը-մըզը տօյուրմանըն պիր եօլունու պուլ-մալըյըլա, պիր գաչ սէնէ պուրտա օ-թուրուպ պունլարըն տիլինի : Էօյրէնէ-ճէխ տէյիլիլա ա՛, իբի լօխմա եէմէք ի-չիւն պիր տէ թէրճիմա՞ն մը թաշըեա-ճաղըզ .

— Տուր պախըյըմ, պէն պիր ազ օխույօրում ըմմա, շու իլք պաշտա եա-զըլան չօրպա օլմախ կէրէք տիւր :

— Նէ՛ օլուրտա օլտուն, ուշաղշ չը-զըրըպ՝ բարմաղըմըզլա պաշտաքի սը-

րայը կէօսթէրիւրիս . հէլպէթտէ եէյէ-
ճէիս պիր շէյ կէթիւրիւր :

— Էօյլէ տիր . պու եազըլանլար
Պօրսա թէլէկրաֆլարը տէյիլ ա . տէ-
յէրէք կարսօնը չըզըրըրլար վէ լիսթա-
նըն պաշտաքի սաթըրը կէօսթէրիս ,
օ եէմէքտէն իսթէրլէր :

Կարսօն պուլնլարա իքի բօռսիօն էթ
սույու կէթիւրիւր :

— Իշթէ եօլունու պուլտուիս , էր-
թին աղա . պա՛գ պունտան սօնրասը
նէ՛ տիր . շու իքինճի սաթըր տա չօր-
պա օլմալը . իւչիւնճիսի տէ շիւպհէսիզ
էթլի տէյիլ տիր . տէօրտիւնճի պէշին-
ճի տէ ֆարզ իտէլիմ քի բիւսվ իլէ մա-
գարօնիա օլսուն , արթըլս ալթընճը վէ
եախօտ եէտինճիսի քիւլպաստը օլմալը
տըր :

— Էօյլէ իսէ կարսօնա սէսլէյիպ
եէտինճիտէն կէթիւրտէլիմ :

Կարսօն կէլիւր վէ կէօսթէրիւրէն եէ-
տինճի սաթըրը օգուտուգտան սօնրա՛
իքի բօռսիօն լահանա չօրպասը կէթի-
րիւր :

— Պու նէ՞ . էթլի զանն իթտիղի-
միզ լահանա չօրպասը չըգտը :

— Էրթին աղա՛ , իշի պէլլի իթմէ-
յէլիմ շու չօրպայըտա իչէլիմ տէ՛ սօն-
րա պիր աղ տահա աշաղտան իսթէրիզ .
քիմ պիլիւր , պէլքի ուշաղա եաննըշ սա-
թըր կէօսթէրաիք :

— Բէք էյի . շիմտի հանկը՞ սըրայը
կէօսթէրէճէիզ . պէրվէչհի բէշին՛ շու
սէքիզինճի օլմաղ , զիրա ինթիմալ քի օ
տա պաշկա թիւրլիւ պիր չօրպա օլմուշ
օլսուն . տօգուզունճույու տա կէչմէլի ,
վէ զաննըմ . . .

— Գա՛րտաշ , զանն ըլա պիր շէյ
կէթիւրտէճէք իսէք , շիմտիտէն պուրա-
տան չըխալըմ . չիւնքիւ չօրպա իլէ զար-
նըմը շիշիւրէճէք վագիսըմ եօխ տըր :

— Էօյլէ իսէ՛ սէն քէնտին պէյէն-
տիկինի կէօսթէրտէ կէթիւրթ . պա՛գ շու

սաղ թարաֆըրզտա օթուրան Ալման-
եալը քիւլպաստըլը նէ՛ իշաահլա եէյօր :

— Գըսա քէս . պու տէֆա օն իքին-
ճի սաթըրը կէօսթէր . հէր հալտէ էթ-
լի կէթիւրէճէք տիր . տէյէրէք կարսօ-
նա սէսլէյիպ՝ օն իքինճի սաթըրը կէօս-
թէրտիւր . կարսօն թաաճիւպլէ կիտիպ
իքի պէօյիւք գապլար ըլա տիկէր պիր
նէվ չօրպա կէթիւրտիղինտէն՝ իքի ար-
գատաշարըն աղըլլարը աչըգ գալըր :

— Դա՛րտաշ , զաննըմ , պու ատամ-
լար պիզի չօրպայըլա պօղաճագլար :

— Ինանըրաը՞ն Հաժ աղա , գար-
նըմ տալու կիպի շիշտի . չօրպա տէ-
յիլ հաթտա պիր գաշըգ սու իչէճէք
մէճալիմ գալմատը :

— Կէ՛յ , չար նաչար պու կէթիւր-
տիղինտէն տէ պիր իքի գաշըգ ալալըմ
տա՛ լիսթանըն էն սօն սըրալարընտան
պիր շէյ իսթէյեկիմ . եօգարտան աչա-
ղա պիւս պիւթիւն չօրպա եազըլը տէ-
յիլ ա՛ պու քեաղըրտ :

Վէ պու տէֆա լիստանըն ալթ պա-
շընտան եօգարըլա տօղրու ճինճի սա-
թըրը կարսօնա կէօսթէրտիւրէր : Կարսօն
կիւլմէսինի կիւճ հալ իլէ զապթ իտէ-
րէք կիթտի վէ իքի թապադ լիմօնլու
տօնտուրմա կէթիւրտի :

— Էյ շիմտի արթըլս չըլտըրաճա-
ղըմ , զա՛րտաշ , չօրպանըն իւսթիւնտէն
տօնտուրմա եէնի՛ր մի :

— Ամանըն արխատաշ , բաթըրտը
չըխարթմա , փարայը վէրիպ՝ շուրատան
գալգըպ պիր պագգալ տիւքեանընա վա-
րալըմ տա զարնըմըլը տօյուրալըմ՝ տէ-
յէրէք՝ պօրճլարընը վէրիւրէր վէ լօ-
գանթատան չըգարլար :

Զէվալլըլար պիլմէզլէր իտի քի Ա-
լէմանիա լօգանթալարընըն եէմէք լիս-
թալարընտա օնպէշ եիրմի թիւրլիւ չօր-
պա , եիրմի օթուգ թիւրլիւ էթլի վէ օն
թիւրլիւ տէ թաթըլը վէ տօնտուրմալար

եաղբւրը վէ իշթէ պու սէպէպտէն իւն-
րի կելմիշ եօդարտան չօրպա աշատան
տա տօնաւորմա եէմէլէրի:

Նշանաւոր հացկերոյթ մը

Սըթմա բունարը

Անխոհեմ երիտասարդի մը կողմէ Կիւրլէ
քէօշկին մէջ տրուած հացկերոյթը վայրենի-
ներու կողմէ յարձակում կրեց. որով ե-
րիտասարդը ոչ միայն իր Մուրաթին չի հա-
սաւ, այլ և ապտակ մ'աւ կերաւ, և պար-
տաւորեցաւ «Աստուած պէրէքէթ տայ, քի-
չով աղատեցանք», ըսելով, մաղապուր բաղադ-
ր վերադառնալ:

ՀԵՌՈՒԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոթոժիկ և Ընկ.)

Լոնտոն

Նախարարաց ժողովին մէջ պատերազ-
մական նախարար Զօրավար Գրոշակ քրդե-
րէն լեզուաւ «մէմուրա ժըմէ զիւլիւմտիքին
չիմա միմա» ըսելով, առաջարկեց պատե-
րազմը շարունակել, բայց Նշմտական նախա-
րար Պ. Արմենիա յայտարարեց թէ օժան-
դակ գանձանակին մէջ առ այժմ՝ կուտ մը չի
կայ:

Լորտ Մարտ, ներքին գործերով զբա-
ղելու քաղաքականութիւնը ազդուապէս պաշտ-
պանեց:

Դատական նախարար պարոն Միութիւն
երեք ամսուան համար Յունաստանի բողոքը
ստանկարաւ ջերմուկները մանելու արտօ-
նութիւն խնդրեց:

Մաքսայի վերատեսուչ Պ. Խուզակի
ջանիք ձեռք ձգուած են մեծաքանակ . . .
ընտանեայի խաւորիներ:

Քաղաքապետ եղբայր Հայելի հրապա-
րակին վրայ տեսնուած կարգ մը կեղծարար-
ները աւելի մաքրելու համար աւելածու մեծ

մեքենայի մը պէտքը զգացուց:

Ոստիկանապետ Տաւրոսաղբար հիւանդ է:
Պարոն Նազարբէկ, յատկապէս կան-
չուած սափրիչի մը ձեռամբ մօրուքը պիշի-
մի դրաւ:



Թուաբանութեան դասաւորուն.

— Պարոն Գառնիկ, մէկ օրը քանի՞
ժամ է.

— Քսան և հինգ.

— Քսան և հինգ մը՝ . . . ատանկ
բան կըլլայ.

— Ի՞նչպէս չըլլար. անցեալները
դուք չէիք ըսողը թէ օրերը ժամ մը
երկնցան:

Անցեալ երկուշաբթի օրը վարուն-
քավաճառի մը աղջիկը կը տեսնէ որ
հայրը իրիկունը տուն վերադարձած ա-
տեն լալեթը կռնակը չէ. ուստի զարմա-
նօք կը հարցւէ.

— Հայրիկ, չաքէթդ ո՞ւր է.

— Սուս եղիր աղջիկ, աս իրիկուն
յաճախորդներէս մէկը 4 հատ վարունք
առաւ, պէս պէլի թաշկինակ չունենա-
լուն պատճառաւ. զանոնք ըսքօրթայիս
քովը ձգած չաքէթիս մէջ փաթտեր տա-
րեր է:

— Է՛յ չի գացիր չի բնտանցի՞ր.

— Բան չունիս նէ բնտուէ. կիտէն
կէլէյիտի՞ պապամ կէլիր իտի:

ԱԶԴ



ԲԳԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Բովանդակութիւն թատերա-
կան երգերու և պարերու
նաև վիճակ ընկերական :
Գին մէկ ֆրանք :



ԿԱԼՎԱՆԻՍԹ

Ամեն տեսակ
տպագրական կա-

ղապարներ պատրաստող, Լաւ-
անձնական և թէ՛ առևտրական կնիքներ :
Սոյն կնիքները որ ըստ վերջին գրութեան
պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երկ-
ցած քառաչուէ կնիքներէ աւելի զիմացիուն են
և դիւրութեամբ կը տպագրուին : Գինն ալ
քառաչուի գինէն տարբերութիւն չունի : Քա-
ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին : Գինն ի վառնա Ձիլինկիր-
էր փողոց թիւ 561 : Գին գոհացուցիչ :

«Հայելի»ի Ա. տարւոյ թիւերը
կազմեալ կը վաճառին գին տասը ֆր.
թղթատարի ծախքը մեր վրայ :



ՃԱՇԱՐԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻԻՖԷՆՃԵԱՆ և ԸՆԿ.

Հաճի Բանաքօին ճիշդ գէմը

Հարսանեաց և խնձոքներու սպասներ
ալ կը գտնուին, որոնք դիւրամատչելի գի-
ներով վարձու կը տրուին :

Տ Պ Ա Ր Ա Ն



ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք :

Այցեւոր, հասցեւոր, նամակա-
դուլ, հրաւիրատուն, բարենիչ, տոմ-
սակ և այլն և այլն թէ՛ պարզ և թէ
ոսկեգօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին : Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին.
Գին գոհացուցիչ : Գինն Հայելիի խմ-
բագրութեան :

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՑԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և ո-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցեւորման գոր-
ծառութեան հրահանգը պարունակող տէտրակ
մը, որուն կողքին վրայ այցեւորման տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ : Գինն խմբա-
գրութեանս : Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանդիմը
յանձնարարողին վրայ է : Գրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նա-
մակադրոջմ կ'ընդունուի : Կտնխիկ :



ԳՐԱԴԱԿ

Ա. Պ. Ա. Գ. Ա. Յ. Ի

Կամ Զուարճալի Բաղդադոյց
ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով
գինն մեր խմբագրութեան :

Отговорень-редакторъ : Н. Драгулев

Печатница «Взаимность» — Варна.